

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 20 Հոկտեմբերի, 2008

«Հայերը Օբամայի համար» կազմակերպության ատենապետ Արին Իբրանոսեանը հանդիպում է ունցել Դեմոկրատական կուսակցութիւնից Միացեալ Նահանգների փոխնախագահի թեկնածու, Սենատոր Ջօ Բայդընի հետ, Հոկտեմբերի 16-ի երեկոյեան Լոս Անջելոսի «Փասիֆիք Դիզայն» անուամբ կենտոնում կայացած դրամահաւաքի հանգանակային միջոցառման ընթացքում: Արին Իբրանոսեանը Սենատոր Բայդընի հետ քննարկել է ամերիկահայութեանը յուզող մի շարք հարցեր, ինչպէս նաեւ խօսել է այն աշխատանքների մասին, որոնք ձեռնարկուում են «Հայերը Օբամայի համար» կազմակերպության կողմից՝ նախագահական թեկնածու Օբամայի օգտին ամերիկահայութեան քուէները ապահովելու ուղղութեամբ: «Մեր զրոյցի ընթացքում, նախ շնորհակալութիւն յայտնեցի Սենատորին՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման կապակցութեամբ իր ցուցաբերած մշտական զօրակցութեան, ինչպէս նաեւ այն քայլերի համար, որոնք Սենատորը ձեռնարկեց, որպէսզի Հայաստանին եւ Ադրբեջանին հաւասարապէս տրամադրուի ամերիկեան ռազմական օժանդակութիւն», - հանդիպումից յետոյ ասել է Արին Իբրանոսեանը: Իր հերթին, Սենատոր Ջօ Բայդընը շնորհակալութիւն է յայտնել «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան տարած աշխատանքների համար եւ յայտարարել է, որ ընտրուելու դէպքում, Օբամա-Բայդընի գլխաւորած վարչակազմում հրապարակայնութիւնն ու անկեղծ մօտեցումը գերիշխող դեր կունենան Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցում: Դրամահաւաքի տյն միջոցաջմանը ներկայ են եղել ամերիկեան քաղաքական բարձրաստիճան դէմքեր, որոնց թւում՝ Լոս Անջելոսի քաղաքապետ Անթոնիօ Վիարագոսան, կոնգրէսական Բրադ Շերմանը եւ այլոք: Միջոցառմանը հրաւիրուել եւ ներկայ է գտնուել նաեւ ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ, իրաւաբան Վիգէն Սոնենց-Փափագեանը, որը առանձնակի զրոյց է ունեցել Սենատոր Ջօ Բայդընի հետ:

Այս լուրերը տրամադրուում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրուելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: